


ԳԵՎՈՐԳ ԳՅՈՉԱԼՅԱՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Օգոստոս 25, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Իմ պատմությունը
- Թիրախային խնդիրներ
- Չսպումներ և հակակշիռներ
- Կարգապահական հանձնաժողով
- Մասնագիտացված դատարան
- Հանրային պաշտպանություն
- Փաստաբանական կրթություն
- Որակավորման հանձնաժողով
- Էթիկայի հարցեր
- Ֆինանսներ
- Վերջաբան




ԻՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ


- Ես Գևորգ Վանիկի Գյոզալյանն եմ, ծնվել եմ 1980թ-ի մայիսի 27-ին, Երևան քաղաքում: 1997թ-ին ավարտել եմ Երևանի N160 միջնակարգ դպրոցը: Բարձրագույն կրթությունս ստացել եմ Մովսես Խորենացու անվան համալսարանում, որն ավարտել եմ 2005թ-ին: Մագիստրոսական կրթությունը շարունակել եմ ՀՀ ԳԱԱ-ում և 2007թ-ին ստացել եմ մագիստրոսի կոչում: Ներկայումս պատրաստում եմ ատենախոսական աշխատանք ՀՀ ԳԱԱ, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում՝ «Իրավական ֆիկցիաները (տեսապատմական վերլուծություն)» թեմայով: 2004թ-ից մինչև 2007թ-ը համատեղությամբ աշխատել եմ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ում և «Լիզլ Ըլայնս» ՄՊԸ-ում որպես իրավաբան-դասախոս: 2007թ-ից մինչև 2008թ-ը աշխատել եմ ՀՀ կենտրոնական բանկում որպես իրավաբանական վարչության ֆինանսական համակարգի վերահսկողության իրավական սպասարկման երկրորդ բաժնի իրավախորհրդատու: 2008թ-ից հիմնել եմ «Գևորգ Գյոզալյան» փաստաբանական գրասենյակը, որը 2013թ-ին փոխել է իր կազմակերպա-իրավական ձևը դառնալով «Գյոզալյան և գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՄՊԸ: 2013թ-ին դասավանդել եմ ՀՀ փաստաբանների դպրոցում: 2019թ-ին «Գյոզալյան և գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՄՊԸ-ն դադարեցրել է իր գործունեությունը, իսկ ես միացել եմ «ԹԻՔԵՅ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՓԲԸ թիմին որպես դատավարական գործերով գործընկեր: Նախաձեռնել եմ բազմաթիվ ռազմավարական դատավարություններ: 2011-2017թթ. հանդիսացել եմ ՀՀ ՓՊ խորհրդի անդամ: 2019թ-ին ստացել եմ առաջարկ ՀՀ ՓՊ խորհրդի անդամի պաշտոնը զբաղեցնելու, սակայն մերժել եմ այն: Իմ գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ իմ անձնական www.lex.am կայքում և ֆեյսբուքյան [Gevorg Gyozyan](#) | Facebook էջում:



ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

- Ստեղծել ՓՊ մարմինների միջև զսպումների և հակակշիռների մեխանիզմ:
- Ստեղծել կարգապահական հանձնաժողով, որն իրավասու կլինի քննել փաստաթանկների վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթները և որոշում կայացնել: Այս որոշումը ենթակա կլինի բողոքարկման ՀՀ ՓՊ խորհրդին, իսկ խորհրդի որոշումը ենթակա կլինի բողոքարկման ՀՀ վերաքննիչ վարչական դատարան:
- Հանրային պաշտպանությունը պետք է լինի գրավիչ և մրցունակ:
- Փաստաթանկական կրթությունն ու փաստաթանկների վերապատրաստման դասընթացները չպետք է լինեն մի դեպքում լոկ արտանագիր ստանալու համար ծանձրալի, բայց պարտադիր պրոցես, իսկ մյուս դեպքում կարգապահական պատասխանատվությունից խուսափելու միջոց:
- Ստեղծել որակավորման հանձնաժողով, որը պրոֆեսիոնալ հենքի վրա կարտոնագրի ապագա փաստաթանկներին:
- Անհրաժեշտ է վարքագծի կանոնագրքի փոփոխության միջոցով հստակեցնել փաստաթանկի էթիկայի կանոնները և դրա կիրառման ոլորտը:
- Ֆինանսական միջոցների տնօրինման կատարյալ թափանցիկություն և վերահսկողություն:





ՀՀ փաստաբանների
պալատում անհրաժեշտ է
հիմնովին փոխել
կառավարման
փիլիսոփայությունը:
Թիրախային քայլերը
անհրաժեշտ, բայց ոչ
սպառնիչ
գործողություններն են
փայլուն
մասնագիտական
միավորում ունենալու
համար:

Զսպումներ և հակակշիռներ

- Վերջին տարիներին այսպես կոչված «ցուցակային» ընտրությունները բերել են նրան, որ Պալատում իսպառ բացակայում է զսպումների և հակակշիռների մեխանիզմը: Մասնավորապես հնից եկած այն մոտեցումը, որ ՓՊ խորհրդի անդամներն ընտրվում են այսպես կոչված «ցուցակով», որի պայմաններում էականը ոչ թե կոնկրետ թեկնածուի ռեյտինգն է, այլ այդ թեկնածուի լոյալությունը ՓՊ նախագահին (ում հավանությամբ նա կարող է հայտնվել կոնկրետ ցուցակում): Սա իր հերթին բերում է նրան, որ ՓՊ խորհրդի անդամն իր քվեարկություններում անկախ է այնքանով, որքանով կոնկրետ հարցը սկզբունքային նշանակություն չունի ՓՊ նախագահի համար: Մեկ այլ լուրջ խնդիր է, երբ ՓՊ խորհրդի անդամները գործում են թիմային տրամաբանությամբ և այստեղ թիմ ասվածը կոնկրետ ցուցակի 12 անձն է: Ավելորդ է ասել, որ նման պայմաններում խոսել հակակշիռների և զսպումների մասին լուրջ չէ: Հարկ է նկատել, որ խնդիրն էլ ավելի սուր է դրված, երբ խորհուրդը քննում է փաստաբանների կարգապահական գործերը և հաստատում ֆինանսական հաշվետվությունները:
- Այս տեսակետից անհրաժեշտ է ստեղծել արդյունավետ օրենսդրական մեխանիզմներ որպեսզի ՓՊ խորհրդի անդամներ ընտրվեն իրապես ռեյտինգային կարգով և ՓՊ նախագահը այս գործընթացում որևէ ազդեցություն չպետք է ունենա: Նախ և առաջ պետք է վերացնել այն մեխանիզմը, ըստ որի մեկ փաստաբան կարող է ընտրել 12 թեկնածուի: Պետք է լինի մեկ ձայն մեկ թեկնածու սկզբունքը: Անկեղծ չեմ լինի, եթե չխոսեմ, որ իմ ընդգծված կարծիքով խորհրդի անդամի համար պետք է սահմանվի փաստաբանական ստաժի որոշակի նվազագույն շեմ և սա տրամաբանական է, քանի որ այն փաստաբանը, որը պատկերավոր ասած չի հագել փաստաբանի կոշիկները և դրանք չի մաշեցրել դատարաններում, չի կարողանալու օբյեկտիվ գնահատական տալ այն փաստաբանի վարքագծին, ով արդեն մի քանի կոշիկ է մաշեցրել դատարաններում:
- Անհրաժեշտ է վերականգնել ոչ միայն կարգապահական հանձնաժողովը այլ նաև որակավորման հանձնաժողովը, ստեղծել ինքնուրույն մարմին՝ ֆինանսական վերահսկող: Այս մարմինների անկախ աշխատանքի շնորհիվ է, որ ունենալու ենք պրոֆեսիոնալ փաստաբանություն և թափանցիկ ֆինանսական քաղաքականություն:

- Խորհրդի անդամների թիվը ներկա պահին 12-ն է, չհաշված ՓՊ նախագահին: Այս թիվը պետք է ողջամտության խողովակով անցնի և գնահատվի դրա արդյունավետությունը: Հարկ է նկատել, որ 12 անդամը նվազագույն շեմն է, որից պակաս չի կարող լինել Խորհրդի անդամների թիվը: Այս տեսակետից, նվազագույն շեմը պետք է 12-ից իջեցնել 7-ի: Ռեյտինգային ընտրության արդյունքում 7 տեղը կգրադեցնեն առավել ծայներ ստացա առաջին յոթ փաստաբանները՝ նվազման սկզբունքով:
- ՓՊ Խորհրդի անդամներն որևէ ձևով չպետք է կապված լինեն ՓՊ այլ մարմինների հետ, ներառյալ փաստաբանական դպրոցի: Մասնավորապես, վերջին տարիներին պատկերն այնպես է, որ ՓՊ Խորհրդի անդամներ են հանդիսանում հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը, նույն գրասենյակի փաստաբանը, փաստաբանական դպրոցի տնօրենը, ՓՊ նախագահի Խորհրդականները, ՓՊ աշխատակազմի ղեկավարը և այլն: Այս պրակտիկան պետք է անմիջապես դադարեցվի, քանի որ այս Խորհրդի անդամներն, ի սպառնալիք իրենց պաշտոնի կամ դիրքի, մշտապես կախված են ՓՊ նախագահից, ինչն էլ իր հերթին աղավաղում է զսպումների և հակակշիռների մեխանիզմը: Ավելորդ է ասել, որ այս մեխանիզմը հնարավորություն է տալիս անվերջ վերարտադրվել, ինչն ի վերջո պայթեցնելու է պալատը ներսից, զոհ գնալով մի խումբ փաստաբանների սուբյեկտիվ շահերին: Չարդել այս մեխանիզմը բավականին բարդ ջանքեր է պահանջում, բայց միանշանակ հնարավոր է:
- ՓՊ նախագահը չպետք է լինի ի պաշտոնե Խորհրդի նախագահ: Խորհրդի ընտրված անդամներն իրենց միջից որոշակի ժամկետով կամ առանց դրա պետք է ընտրեն Խորհրդի նախագահին:
- Խորհուրդը կարգապահական գործեր քննող մարմնից պետք է վերածվի կարգապահական գործերով կայացված որոշումները վերանայող մարմնի, միաժամանակ կարգապահական գործերը պետք է քննի Կարգապահական հանձնաժողովը և դրա վերաբերյալ որոշում կայացնի:
- Կարգապահական վարույթների մեխանիզմը պետք է լինի այսպես՝
 - Կարգապահական վարույթ է հարուցում ՓՊ նախագահը և այն հանձնում Կարգապահական հանձնաժողովին,
 - Կարգապահական հանձնաժողովը քննում է գործը և որոշում կայացնում, որը կարող է բողոքարկվել ՓՊ Խորհրդին,
 - ՓՊ Խորհուրդը բողոքի շրջանակներում վերանայում է Կարգապահական հանձնաժողովի որոշումները,
 - ՓՊ Խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ վարչական դատարան, որով և ավարտվում է կարգապահական գործը:
 - Վերաքննիչ վարչական դատարանի որոշումը ենթակա չի լինի բողոքարկման:

Կարգապահական հանձնաժողով

- Այս տարիների փորձը ցույց տվեց, որ սխալ էր Կարգապահական հանձնաժողովի գործունեության դադարեցումը, որը փոխարինվեց այսպես կոչված գործ նախապատրաստողների ինստիտուտով: Սա սխալ էր այն ժամանակ և սա սխալ է հիմա:
- Պետք է վերականգնվի կարգապահական հանձնաժողովի գործունեությունը և նրան պետք է տրվի առավել լայն լիազորություններ, քան միայն փաստեր հավաքագրելը:
- Կարգապահական հանձնաժողովը պետք է բաղկացած լինի նվազագույնը 12 անդամներից, որը կքննի կարգապահական վարույթի գործերը և որոշում կկայացնի:
- Կարգապահական հանձնաժողովի որոշումը պետք է ենթակա լինի բողոքարկման:



Մասնագիտացված դատարան

- Փաստաբանի գործունեության հետ կապված հարցերով դատական պաշտպանությունը չպետք է լինի չափազանց երկարատև և այն չպետք է ենթակա լինի ընդհանուր իրավասության: Այս տեսակետից պետք է ստեղծվի մասնագիտացված դատարան, որը բողոքի հիման վրա կվերանայի ՓՊ խորհրդի որոշումը:
- Ես առաջարկում եմ Վերաքննիչ վարչական դատարանում կազմավորվի երեք դատավորից կազմված դատարան, որն իրավասու կլինի քննելու ՓՊ խորհրդի դեմ բերված որոշումները:
- Փաստաբանի վերաբերյալ կարգապահական գործընթացը պետք է տևի ոչ ավել մեկ տարուց, սկսած հարուցման փուլից, վիճարկումից մինչև որոշման ուժի մեջ մտնելը: Վերաքննիչ վարչական դատարանի որոշումը պետք է ուժի մեջ մտնի կայացման պահից և ենթակա չլինի բողոքարկման:
- Փաստաբանի էթիկայի վերաբերյալ գործերը քննող դատավորները նվազագույնը պետք է խորը գիտելիքներ ունենան փաստաբանական վարքագիծը կանոնակարգող նորմերի վերաբերյալ:



Հանրային պաշտպանություն

- Հանրային պաշտպանության ոլորտում նախ անհրաժեշտ է բեռնաթափել հանրային պաշտպաններին մակագրված գործերը: Գործերով ծանրաբեռնված հանրային պաշտպանը չի կարող որակյալ արդյունք ցույց տալ: Այս ոլորտում պետք է սերտ համագործակցել նաև հասարակական կազմակերպությունների հետ:
- Ծախսերի կրճատման միջոցով պետք է հասնել հանրային պաշտպանների թվի ավելացմանը: Հանրային պաշտպանին հատկացված բյուջեն չպետք է օգտագործվի այլ նպատակներով:
- ՀՊԳ-ում անհրաժեշտ է ներդնել ներկա ժամանակներին համահունչ՝ գործերի բաշխման արդարացի համակարգչային համակարգ: Ինչպես նաև բոլոր գործերը պետք է թվայնացվեն:
- Հանրային պաշտպանի գրասենյակից մեկընդմիջտ պետք է բացառել ոչ պրոֆեսիոնալ հիմքով աշխատանքի անցնելը: Հանրային պաշտպանի մրցույթը պետք է լինի ավելին քան թափանցիկ:
- Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը, ինչպես նաև հանրային պաշտպանը չպետք է զբաղեցնեն այլ պաշտոն ՓՊ-ում և իրենց ողջ ներուժը պետք է ի գործ դնեն ՀՊԳ բնականոն գործունեության համար:




Փաստաբանական կրթություն

- Փաստաբանական կրթության մեջ են ներառել են թե փաստաբանների վերապատրաստումները և թե փաստաբանական դպրոցի ուսուցումը: Փաստաբանական դպրոցն ու փաստաբանական պալատը մեկընդմիջտ պետք է հրաժարվեն ունկնդիրներին և փաստաբաններին սովորեցնելու այն, ինչը նրանք արդեն իսկ սովորել են ԲՈՒՅ-ում:
- Դասընթացների պարտադիր բնույթից պետք է անցում կատարվի մրցունակ բնույթի, երբ փաստաբանը դասընթացներին մասնակցում է ոչ թե նրա համար, որ կարգապահական պատասխանատվության չենթարկվի, այլ նրա համար, որ դասընթացը հետաքրքիր է:
- Եթե փաստաբանը առցանց եղանակով կամ որևէ այլ եղանակով մասնակցել է միջազգային հեղինակություն ունեցող կառույցների կողմից կազմակերպված սեմինարներին, ապա այն պարտադիր պետք է հաշվի առնվի ՓԴ-ի կողմից: Էլ ավելին, հենց ՓԴ-ն պետք է խրախուսի այդ դասընթացներին մասնակցելը: Դասընթացներ կազմակերպող կազմակերպությունների ցանկը պետք է ավելացվի, դրանում ընդգրկելով նաև ՀՀ-ում գործող հեղինակավոր ԲՈՒՅ-երին, ինչպես նաև հեղինակավոր հասարակական կազմակերպություններին:
- Փաստաբանական դպրոցում պետք է առավելապես դասավանդեն փաստաբանական հմտություններին տիրապետող հայտնի փաստաբանները, որի շրջանակներում պետք է ոչ թե տեսություն դասավանդվի, այլ պրակտիկ խնդիրներ, փաստաբանական մարտավարություն, վկաների հարցաքննության հմտություններ և այլն:
- Փաստաբանական դպրոց ընդունվելը պետք է բարդացվի, մասնավորապես ստանդարտ թեսթային լուծումներից պետք է անցնել կոնկրետ խնդիրների լուծման: Այս տեսակետից պետք է ուսումնասիրվի նաև փաստաբանական շուկան և շուկային համապատասխան փաստաբանական ընդունելիության տարեկան առավելագույն շեմ սահմանվի:
- Փաստաբանական դպրոցում պետք է հասկանալի և ընկալելի լինի որոշակի փորձ ունեցող անձանց ուսուցումը: Այս տեսակետից, եթե անձը ունակ է առանց դպրոցում սովորելու հանձնել համապատասխան քննությունները, ինչպես նաև ներկայացնել համապատասխան փաստաթղթեր, որ նա զբաղվում է մասնավոր իրավաբանական պրակտիկայով, ապա նա պետք է հնարավորություն ունենա առանց դպրոցում սովորելու, ընդհանուր հիմունքներով մասնակցելու քննություններին և հանձնելու դեպքում պետք է ստանա արտոնագիր:


Որակավորման հանձնաժողով

- Որակավորման հանձնաժողովը պրոֆեսիոնալ հենքի վրա պետք է կազմակերպի որակավորման քննությունները և ամփոփի դրանց արդյունքները, բացառելով ցանկացած տեսակի սուբյեկտիվիզմը արտոնագրման պրոցեսում:
- Որակավորման հանձնաժողովի անդամները ութից կարելի է դարձնել ինը, որոնք պետք է ընտրվեն Ընդհանուր ժողովի կողմից որոշակի նվազագույն փաստաբանական ստաժ ունեցող փաստաբաններից (5 փաստաբան, 4 ոչ փաստաբան, օրինակ, հասարակական կազմակերպություն, գիտական հանրույթ, դատական համակարգ, արդարադատության նախարարություն): Հասարակական կազմակերպությունների ներգրավվումը հնարավորություն կտա առավել թափանցիկ դարձնել Որակավորման հանձնաժողովի գործունեությունը:
- Որակավորման հանձնաժողովն իր կազմից պետք է ընտրի Որակավորման հանձնաժողովի նախագահին:
- Որակավորման հանձնաժողովը պետք է սերտ համագործակցի փաստաբանական դպրոցի հետ:
- Որակավորման հանձնաժողովի արտոնագրման նիստերը պետք է հեռարձակվեն ինտերնետ կայքուղիներով:



Էթիկայի հարցեր

- Էթիկական հարցերը ներկայումս խառնաշփոթի աստիճան անհանգստացնող են: Այս տարիների ընթացքում ՓՊ-ն չի կողմնորոշվել թե վարքագծի նորմերը փաստաբանի վրա որքանով են տարածելի:
- Օրինակ, փաստաբանը հրապարակային վիրավորում և զրպարտում է անձին, այս պարագայում նա պե՞տք է պատասխանատվության ենթարկվի վարքագծի նորմերով թե՞ պետք է վրա հասնի քաղաքացիա-իրավական պատասխանատվություն թե՞ երկուսը միասին: Նմանատիպ օրինակները բազմաթիվ են:
- Բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանի հրապարակային գործունեությունը վնասում է ՓՊ հեղինակությանը, փաստաբանի վարքագիծը պետք է ենթակա լինի ստուգման վարքագծի կանոններով:
- Երբ անձի ասածը հանրության մոտ ընկալվում է որպես փաստաբանի ասած և այդ ասածի մեջ առկա են հանրային կարգի և էթիկայի նորմերի կոպիտ խախտումներ, ապա այդ փաստաբանը պետք է ենթարկվի պատասխանատվության:
- Այս տեսակետից վարքագծի կանոնագիրքը պետք է ավելին քան որոշակի սահմանի այն սահմանները, որից չպետք է անցնեն փաստաբանները:
- Հայիոյախոսությունը, ծեծը, իրար հետ «կիսագողական» հարաբերությունները պետք է արմատախիլ արվեն փաստաբանական համայնքից:



ՖԻՆԱՆՍՆԵՐ

- Փաստաբանների պալատում անհրաժեշտ է ստեղծել անկախ ինքնուրույն մարմին՝ ֆինանսական վերահսկող, ով որևէ կապ չպետք է ունենա ՓՊ նախագահի, ՓՊ հաշվապահի կամ ֆինանսական տնօրենի հետ (ֆինանսական տնօրեն հաստիքի գոյության ողջամտությունը պետք է գնահատվի): Այս մարմինը պետք է ընտրվի խորհրդի կողմից ՓՊ նախագահի կողմից առաջադրված երեք թեկնածուներից:
- Ֆինանսական վերահսկողը ընտրվում է խորհրդի կողմից յուրաքանչյուր չորս տարին մեկ, բացառությամբ, երբ օբյեկտիվ պատճառներով ֆինանսական վերահսկողի հետ կղադարեցվի համապատասխան պայմանագիրը:
- Վերահսկողը իրականացնում է փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական վերլուծություն և համապատասխան տեղեկատվություն է տրամադրում փաստաբանների պալատի խորհրդին, ով իր հերթին այն հասանելի է դարձնում բոլոր փաստաբաններին:
- Ֆինանսական վերահսկողը պետք է վերլուծի նաև Հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող միջոցների ծախսման արդյունավետությունը:



ՎԵՐՋԱԲԱՆ

Սիրելի ընկեր, այս ծրագրում ես շատ հակիրճ նկարագրել եմ այն թիրախային հարցերը, որոնք առաջնահերթ կարգով պետք է լուծում ստանան: Սա այն նվազագույն գործողություններն են, որը ես հրականացնելու եմ առաջնահերթ: Իհարկե, այս թիրախային հարցերը չեն կարող լինել սպառնիչ, ձեզ հետ շփումներում այն պարբերաբար կարող է լրացվել և թարմացվել, բայց մի բան այս փուլում պարտադիր է, մենք պետք է այս նվազագույն քայլերով առաջ շարժվենք և չդուփենք պրոֆեսիոնալ փաստաբանությունը քայքայող ճահճում: Պարզ է, որ ճահճն ունի իր խաղի կանոնները, որը սակայն մերժված է իմ կողմից: Ես չեմ դիմելու ճահճի կանոններին, որի չորացման համար մանդատ եմ ինդրում: Իմ ընդգծված դիրքորոշումն այն է, որ եթե դո՛ւ, սիրելի ընկեր, քո ձայնը տալու ես ինձ բացառապես պրոֆեսիոնալ փաստաբանություն ունենալու ակնկալիքով, զերծ որևէ քաղաքական կամ անձնական շահերից, ապա ես իմ թիկունքում զգալու եմ այդ ձայնի ուժը՝ այս ծրագրում նշված բարեփոխումներն իրականացնելու համար: Փոփոխությունների պահանջը պետք է բխի Ընդհանուրի մեծամասնությունից, իսկ ես լուր դրա կատարողը պետք է լինեմ: Ավելի լավ է ես չստանամ մանդատ, քան ստանամ այս մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ մանդատ: Այժմ քո ձեռքում է այս հարցի լուծումը, դու իրապե՞ս ցանկանում ես, որ ՓԴ-ն դուրս գա այս իներտ վիճակից և շարժվի դեպի զարգացում, զերծ որևէ քաղաքական կամ անձնական շահերից, թե՞ ամեն ինչ թողենք նույնը: Որոշումը քոնն է իր կանխատեսելի հետևանքով: Բոլոր դեպքում ես հարգում եմ քո որոշումը...

Գևորգ Գյոզալյան

